

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ  
ԷՐԶՐՈՒՄԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

(XVI դ.—XX դ. սկիզբ)

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

XIV դարի ընթացքում կատարելով մի շարք նվաճումներ Փոքր Ասիայի արևմտյան ծովափնյա շրջաններում և Բալկաններում՝ նորաստեղծ օսմանյան պետությունն ակտիվացրեց իր զավթողական քաղաքականությունը նաև Արևելքում և 1473 թ. Դերջանի ճակատամարտում հաղթելով ակ-կոյունլու թուրքմենական ցեղերին՝ բռնադավթեց Հայաստանի մեծագույն մասը։ Նվաճված երկրամասում թուրքական վարչաժողովրդաբարձրական քաղաքականությունը, պայմանավորված մահմեդական վերնախավի ազգային-քաղաքական և տնտեսական շահերով, աչքի ընկավ անկայունությամբ և մշտապես փոփոխություններով։

Մինչև 1530-ական թվականները Արևմտյան Հայաստանի տարածքում ձևավորվեցին էրզրումի (Կարնո), Սևրաստիայի, Կարսի, Վանի, Դիարբեքլի-րի, Ախալցխայի էյալեթները<sup>1</sup>։ Վարչականորեն էրզրումի նահանգի կազմում էր լայն ինքնուրույնությունից օգտվող Բայազետի սանջակը, որը երբեմն ազբյուրներում հիշատակվում է նաև իբրև առանձին էյալեթ։ Էրզրումի ընդարձակ էյալեթը, որի տարածքը տարբեր ժամանակներում տատանվում էր 70—80 հազ. քառ. կմ սահմաններում, ընդգրկում էր հետևյալ գավառները՝ էրզրում, Վերին Բասեն, Ստորին կամ ներքին Բասեն, Խնուս, Քըղի (Կեղի), Դերջան, Երզնկա, Բաբերդ, Սպեր, Քորթում, ինչպես նաև փառայանիստ Բայազետի լիվա-փառայությունը իր շորս գավառներով՝ Բայազետ, Ալաշ-կերտ, Դիարդին և Խամուր։ Այս վարչական բաժանումը հիմնականում պահպանվեց մինչև XX դարի սկիզբը։

Ինչ ժողովրդագրական իրավիճակ էր Արևմտյան Հայաստանի կենտրոնական նահանգում XV դարի վերջից մինչև XVII դարի առաջին կեսը՝ ընկած ժամանակահատվածում, այսինքն՝ թուրքական տիրապետության հաստատման շրջանում։ Տարբեր ազբյուրների համադրությունից սլարգորոշ երեվում է, որ շնչած նախորդ ժամանակաշրջանում երկրամասում տեղի ունեցած ոչ հալանպատ էթնոգործընթացին, էրզրումի նահանգի տարածքը հիմնականում բնակեցված էր տեղաբնիկ հայ տարրով, որի կողքին առանձին գավառներում օրհոօր հալանվում էին եկվոր էթնիկական այլ խմբեր։ Այսպես, XVII դարի առաջին կեսին էրզրումի էյալեթի 23 գավառներում տիրող ժողովրդագրական վիճակի մասին կարևոր նյութեր է հաղորդում այդ ժամանակաշրջանի հեղինակ, Բարսը Հայքի աշխարհագրությանը քաջատեղյակ Հակոբ Կարնեցին իր «Շենված Կարնո քաղաքին...» աշխատությունում։ Ըստ այդ սկզբնաղբյուրի, նահանգի գավառների մեծ մասը բնակեցված էր բացառապես հայերով։ Դրանցից մի քանիսի մասին մեջբերենք Կարնեցու խոսքերը.

<sup>1</sup> Օսմանյան կայսրության վարչական բաժանումը մանրամասն տե՛ս A. Birken. Die Provinzen des Osmanischen Reiches, Wiesbaden, 1976.

Ղուզուլջան—«գալառ մի գեղեցկաշէն յոյժ, պարոնանխատ, ...լի է գեղե-  
յօք Հայոց»:

Դերջան—«ունի գիւղս բազումս Հայոց բնակարան... և ունի գուղաքա-  
ղաք զԲագառիճ»:

Երզնկա—«ունի գիւղք և աւանք բազում և ունի վանս ԻԴ (24): ...նու ունի  
բաղաք մեծ Հայոց գերզնկայ, որ լի է ամենայն բարութեամբ...»<sup>2</sup>:

Կամախ—«երկիրն Դարանաղեագ, որ ունի գիւղք և աւանք... և է յոյժ  
վայելուչ և մրգաբեր փոքրիկ քաղաք և բնակութիւն սզգիս Հայոց»: Հակոբ  
Կարնեցու մոտ համանման վկայութիւններ կարելի է գտնել նաև Բայազետ-  
տի, Խամուրի, Դիաղինի, Բասնի, էրզրումի և այլ գավառների կապակցու-  
թյամբ:

Նույն հեղինակի վկայութեամբ, գուտ հայաբնակ գավառների հարեա-  
նութեամբ մի քանի վարչամիավորներում իրենց զգացնել էին աւախս թուր-  
քական ծագում ունեցող էթնիկական խմբերը՝ հայկական աղբյուրներում  
«տաճիկ» հաւաքական անունով հիշատակվող թուրքերը, ինչպես և՛ բր-  
դերը:

«Տաճիկների» կարելի էր հանդիպել գերազանցապես հյուսիսային գա-  
վառներում: Գայլ գետ կամ Կելիթ գավառի մասին Հ. Կարնեցին գրում է.  
«Ունի գիւղս բազում ձորամէջս... և ունի գուղաքաղաք զԿարմրի, և բնու-  
կիչք երկրին Հայք և Տաճիկք են»: Վերջինիս հարեան Շեռեան կամ Շարիան  
գավառակում «բնակիչք երկրիս Հայ բազում, Հօթօմք (հուլներ—Ա. Մ.) և Տա-  
ճիկք ևս»: Նահանգի հյուսիս-արեւելյան մասում ընկած Վերին Բասնի մա-  
սին կարում ենք. «և են բնակիչք երկրի հայ և թուրք սակաւք»: Այս մե-  
րերումներից սարգորոշ երևում է, որ վերջին երեք վարչամիավորում բնակ-  
չութեան մեծամասնութիւնը կազմել են հայերը, այլապես «տաճիկների» հա-  
մար հեղինակը չէր գործածի «տաճիկք ևս», «թուրք սակաւք» բառակապակ-  
ցութիւնները:

Այն, որ հյուսիսային գավառները, որոնք առավել շատ էին կրել մահ-  
մեղական տարրերով բնակեցվելու օտմանյան կառավարութեան ձեռնարկում-  
ների ազդեցութիւնը, ունենալով հայ-թուրքական խառն բնակչութիւն, այ-  
նուհանդերձ, գերազանցապես հայաբնակ էին, և «տաճիկները» շնչին թիվ  
էին կազմում, թերևս երևում է նաև թուրք հետադոտող Միթոզլուի հրատա-  
րակած գրքից<sup>3</sup>, որում բերված տվյալներով էրդում նահանգային կենտրո-  
նից հյուսիս ընկած Բաբերդի դաշտում քրիստոնեաները XVI դարում բնակչու-  
թեան անլիճելի մեծամասնութիւնն էին: Բացի թուրքերից էրզրումի նահանգի  
տարածքում ապրող եկվոր փոքրաթիվ էթնոխմբերի մեջ թիչ թե շատ նկա-  
տելի էին նաև քրդերը: Նրանք իրենց յեղախմբերով բնակեցնում էին նա-  
հանգի հարավային շրջանները: Քրդի դավառում կային «գիւղք բազումք և  
բնակութիւն Հայոց և Քրդաց»: Վերջիններից առեւելք, Բյուրակնյան (Բինգու-  
լի) լեռների տարածվող ննուս գավառի «բնակիչք երկրիս բազում  
Հայ և Քուրքք»: Այս դեպքում էլ դժվար չէ նկատել, որ այդ շրջաններում  
քրդերը իրենց թմաքանակով չեն գերազանցել հայերին:

Այսպիսով, XVII դարի առաջին կեսին էրզրումի նահանգը Արևմտյան  
Հայաստանի էթնիկապես ամենամիատարր վարչամիավորումներից մեկն էր:  
Սակայն այս վիճակը երկար չտևեց:

Հպատակ ժողովուրդների նկատմամբ յիսնևտար գերիշխանութիւնն հաս-  
տատու և սպառնալից սուլթանական կառավարութիւնն սկսեց նվաճված  
երկրամասերը բնակեցնել թուրքալիզու և իրանալիզու (գերտուրանապետ  
օրդեր) ցեղերով: Ձեռնարկված այդ քաղաքի հետևանքով աստիճանաբար  
փոփոխվեց Առևմտահայաստանի էթնիկական դիմագիծը: Բնակչութեան առ-

<sup>2</sup> Հակոբ Կարնեցի. Շեռեան Կարնոյ քաղաքին (Մանր ժամանակագրութիւններ, XIII—XVIII դդ., կազմեց Վ. Ա. Հակոբյան. հ. 2, Երևան, 1956, էջ 550—551):

<sup>3</sup> I. Miroglu. XVI. Yuzvıda Bayburt Sancagi, Istanbul, 1975.

դրանքին կազմով երբեմնի միատարր Արևմտյան Հայաստանում ծնվեցին մահ-մեղական կղզյակներ՝ օրեցօր իր հայրենիքից դուրս մղելով հայությունը:

Արևմտյան Հայաստանում օսմանյան վարչամեթոդների մտցնելու և տեղի բնակչությանը հարկման ենթարկելու խնդրով՝ արդեն 1478 թ. էրզրումից հյուսիս, Պոնտական լեռների հարավային ստորոտներով ձգվող Բաբերդի, Սպերի, Թորթումի և այլ գավառներ ուղարկվեց օսմանյան բանակի ամենա-արյունոտ զորամաստարներից մեկը՝ կալա փաշան: Ես կարճ ժամանակում ավերակների վերածնեց պատմական Բարձր Հայքի և Տարբի հարյուրավոր հայկական բնակավայրեր, որի բաշեց տասնյակ հազարավոր մարդկանց: Ավելի քան 50 հազար հայեր, փրկվելով ֆիզիկական ոչնչացումից, նախընտրեցին մահամեղականացումը<sup>4</sup>: Զանգվածային կոտորածներն ու մահ-մեղականացման դեպքերն ավելի հաճախակի դարձան, երբ 1512 թ. սկսվեց թուրք-պարսկական երկուրտու պատերազմը: «...ասպատակեալ քանդէին և աւերէին առհասարակ...»,— գրում է ականատես Տեղիեակը, — մինչև ի դաշտն Մշու. հնուտու և Ալաշկերտու, Գիւտուտու և համուրուլ, Բաթնուցա և Պալադիտու, երկիրս ամէն երկին ու աւերէին, զկին և զտղայս զէրի ածկին... զի այնպէս անապատ արարին այս սահրաթ երկրներս, որ Արզուրումայ հետ մինչև էրէվան միայն բերթորայրն ի շէն մնացին...»<sup>5</sup>: Վերսհիշյալ սողերից երևում է, որ տվյալ դեպքում պատերազմական դործողությունների հետևանքով ավերակների են վերածվել էրզրումից մինչև Երևանի խանութլուս տարածքն ընկած գավառները՝ Կարինը, Վերին և Սուտրին Բասենները, Ալաշկերտը, Բայազետը, Գիւղինը:

Պարսկաթուրքական հաշտության կնքումից անմիջապես հետո, 1643 թ. թուրքական կառավարության Քանձնարարությանը Արևմտյան Հայաստան ուղարկվեց Ջաֆար փաշան՝ «լոյժ անիրաւ և շարասէր... ժանտաբարոյ...», որ աշխարհագիր անցկացրեց էրզրումի նահանգում: Հարկապահանջությունն ու բռնություններն այնքան անտանելի էին, որ նահանգի հյուսիսային մի քանի գավառների բրիտանացիներ «ի յահէն դարձան յօրէնսն Մահմէտի»<sup>6</sup>, մասին վկայում է մահամեղականացման: Մեկ այլ զանգվածային մահամեղականացման մասին վկայում է XVIII դարի վերջի և XIX դարի սկզբի պատմաբան-աշխարհագետ Ղուկաս Ինճիճյանը. «Ձանձրացեալք ի բռնութենէ և ի զրկանաց, դարձան (հայերը—Ա. Մ.) առհասարակ ի կրօնս տաճկաց»: Գարձալ կրօնափոխությունն ընդգրկեց էրզրումի նահանգի հյուսիսային շրջանները: Բերդազարակի «բնակիչք... առհասարակ էին յազգէս հայոց,— շարունակում է Ինճիճյանը,— այլ ապա ըստ մեծի մասին դարձան ի տաճկութիւն և սակաւ մնացին ի բրիտանացիք»<sup>7</sup>:

Քրիստոնյա բնակչության բռնի մահամեղականացումը դուրսգրվում էր եկեղեցիների ոչնչացումով, սովերումով կամ մզկիթների վերածումով: 1662 թ. Վանի անունով մեծ մուլաի և կայսրության գլխավոր վեզիրի նախաձեռնությամբ «մինչև Ժ (10) եկեղեցի Հոստմոց (հուլիներ—Ա. Մ.) և Հալոց քանդեալ աւերեցին,— կարգում ենր աղբյուրներում,— և զգլուխս ամենայն բրիտանացի սիւս գտակ անցուցին... և առին այն զեկեղեցիս (խոսքը էրզրումի միջնաբերդի եկեղեցու մասին է—Ա. Մ.), արարին իւրեանց մզկիթ. և եղև սուզ մեծ ազգիս Հալոց...»<sup>8</sup>:

1723 թ. կազմակերպված հերթական ավերիչ արշավանքներից մեկի գոհր դարձավ էրզրումի նահանգի հյուսիսային մեկ այլ գավառ՝ Սպերը, որ-

4 K. Koch. Wanderungen im Oriente während der Jahre 1843 und 1846. Weimar. 1846, 2. Տ ա շ յ ա ն. Հայ բնակչությունը Սև ծովեն մինչև Կարին. Վիեննա, 1921, էջ 3—20:

5 Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 566:

6 Նույն տեղում, էջ 554:

7 Ղ. Ի ն ճ ի ճ յ ա ն. Աշխարհագրություն շրջից մասանց աշխարհի. հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 132:

8 Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 566:

տեղ մոխրակույտերը՝ վերածվեցին ավելի քան հարյուր հայկական դյուղեր<sup>9</sup>։ Ամեն մի այսօրինակ միջոցառում ուղեկցվում էր հայ բնակչության գերեվարությամբ։ «Զօրքն տաճկաց գէրէին ազգն հայոց և բերեալ վաճառէին, կաս ըռնաղատէին՝ թե ուրացիր զՔրիստոս, ոմանք հաւատն ուրացան և ոմանք, որք ոչ ուրացան, սրոյ ճարակ տային կամ վաճառէին...։ Արզրումայ այնչափ գերեցին, որ մեք գրով ոչ կարացաք ճառել»<sup>10</sup>։

Բռնի մահմեդականացման, թուրքացման և բռնագաղթի հետ մեկտեղ օսմանցիները ձեռնարկեցին Արևմտյան Հայաստանի լիբնոնկարագիրը խաթարող մեկ այլ «միջոցառում»։ XVI դարի սկզբներից Սեֆյան Իրանի դեմ ռազմաքաղաքական բուֆեր՝ պատնեշ ստեղծելու նպատակով թուրքական սուլթանները սկսեցին կայսրության հարավային և հարավ-արևելյան շրջաններից խրախուսել քրդերի ներհոսքը Հայկական լեռնաշխարհ։ Արդեն պարսկաթուրքական պատերազմի սկզբում՝ 1515 թ. քուրդ ցեղապետերից մեկի՝ Էգրիսի օժանդակությամբ սուլթան Սելիմ Ահեղը իրեն ենթարկեց Դիարբեքրի և նրանից հարավ տարածված քոչվոր քրդերին։ Ի փոխհատուցումն իր ծառայության, էգրիսը ստացավ այդ շրջանների կառավարման իրավունքը և քոչվորական կյանքով ապրող իր հայրենակիցներին հարկադրեց տեղափոխվել էրզրումի նահանգի տարածքը<sup>11</sup>։ Քրդական մեկ այլ վերարևակեցում կազմակերպեց սուլթան Մուրադը 1635 թ.։ Ընդառաջելով գաղթել ցանկացող քրդական ցեղերի ցանկությանը՝ նա կազմակերպեց զանգվածային մի մեծ ներհոսք դեպի էրզրումի նահանգի Երզնկայի և Դերջանի գավառներ։ Խոսակցելով Դերջանում քրդերի հայտնվելու մասին, որն ամենայն հավանականությամբ տեղի է ունեցել XVІІІ դարի ընթացքում, հայ հեղինակները վկայում են, որ «քուրդք բնակեալք ի սմա (Դերջան—Ա. Մ.), եկեալ ասին ի սէկմանապատայա»<sup>12</sup>։ Նույն ժամանակ ներհոսք տեղի ունեցավ Բասենի և Ալաշկերտի գավառներ, որտեղ զերազանցապես հաստատվեցին Փեսյան ցեղի բազմաթիվ քրդեր։

Վերոհիշյալ էթնիկական գործընթացներն ուժեղացան XVІІІ դարի կեսերին։ Եթե սկզբնական շրջանում քրդերը հյուսիս էին տեղափոխվում միայն ամառվա ամիսներին ալպյական մարգագետիններում իրենց բազմաբանակ ոչխարներն արածեցնելու նպատակով, ապա այժմ նրանք անցան մշտական բնակության՝ տեղավորվելով հայկական գյուղերում։ Հայ բնակչությունը պարտավոր էր ամբողջ ձմեռ պահել ոչ միայն քրդերին, այլև նրանց բազմաբանակ անասուններին։ Քրդերին սուլթանների արտոնած այս արատավոր համակարգը հայտնի էր «ղշլաղություն» անունով։ Այս քաղաքականության հետևանքով ավելի ստվարացավ քրդերի թիվը հատկապես Բյուրակյան (Բինդյուլի) լեռներին հարող գավառներում։

Ինչևէ, XV—XVІІІ դդ. բռնի մահմեդականացման, հարկադիր արտագաղթների, թուրքերի ու քրդերի միտումնավոր բնակեցման հետևանքով Արևելյան Հայաստանում, այդ թվում էրզրումի նահանգում, որոշակիորեն աճեց մահմեդական բնակչության թիվը։ Երբեմնի էթնիկապես միատարր երկրամասում ծնվեցին նոր էթնոխմբեր՝ թուրքեր և քրդեր։ Վերջիններից բացի էրզրումի նահանգի հյուսիսային մի քանի գավառներում հանդես եկան նաև նոր էթնոկրոնական համայնքներ։ Մահմեդականացած հայության մի զգալի մասը իշխանությունների սպառնալիքների տակ առերես էր դավանում մահմեդականությունը։ Աղբյուրների վկայությամբ նրանք ցերեկով մահմեդականներ էին, իսկ գիշերը նորից դառնում էին քրիստոնյաներ՝ գաղտնի հաճախում եկեղեցիներ, կատարում քրիստոնեական ծիսակատարություններ։

9 Ա. Թ. Կ. և Կ. Ճորոխի ավազանը. Երևան, 1934, էջ 110։

10 Մատենադարան, ձև. 6332, էջ 552։

11 Т р о т т е р. Мало-азийские курды.—Известия Кавказского отдела. т. VII. Тифлис, 1873, с. 1—3.

12 Ղ. Ի ն ճ ի ճ և ա ն. նշվ. աշխ., էջ 97.

Այդօրինակ բնակչությունը հայտնի էր «կեսկեսներ» անունով, այսինքն՝ կես հայ-քրիստոնյա և կես թուրք-մահմեդական:

Դժվար չէ կոտհել, որ XVI—XVIII դարերում ինչպես Արևմտյան Հայաստանը, այնպես էլ նրա խոշոր հատվածը կազմող էրզրումի էյալեթը այլևս չէին ներկայանում որպես հայկական էթնոմիտոսարը երկբամասնը, թեև XIX դարի սկզբին, ավյալ դեպքում՝ էրզրումի նահանգի բոլոր գավառներում (Բացի Կելիթի և Շարին Կարահիսարի մի քանի նահանգների, Երզրնկայի Կամախ գավառակի, Ալաշկերտի հալի Յաղի և Մրկեկար լեռնային համայնքների) հալ բնակչությունը թվապես գերազանցում էր եկվոր էթնոտարրերին: Բավական է նշել, որ այդ ժամանակ նահանգի տարածքում հաշվովում էր 978 հայկական գյուղ և 14 քաղաք, որոնցում ապրում էին ավելի քան 400 հազ. հայեր, որից գյուղական բնակչությունը կազմում էր 308 հազ., քաղաքայինը՝ 93 հազ. մարդ<sup>13</sup>:

1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը Մուրադական լծից սկստագրվելու հույսեր արթնացրեց արևմտահայության շրջանում, որի օժանդակությամբ ռուսական զորքերը գրավեցին Արևմտյան Հայաստանի, այդ թվում էրզրումի նահանգի կենտրոնական և արևելյան մի շարք գավառներ: Սակայն եվրոպական տերությունների ճնշման սակ 1829 թ. սեպտեմբերին թուրքիայի հետ Ռուսաստանի կնքած հաշտության պայմանագրով նվաճված շրջանները թուրքերին թողնելու լուրը մեծ հուսահատություն անաջացրեց հայության շրջանում: Չկամենալով մնալ օսմանյան տիրուպետության տակ՝ 75 հազ. արևմտահայեր, որոնք գլխավորապես էրզրումի նահանգի բնակիչներ էին, նախընտրեցին արտադաշտը և հաստատվեցին Անդրկովկասից Ռուսաստանին անցած շրջաններում: Թեև էրզրումի նահանգից գաղթած հայերի թիվը կազմում էր մոտավորապես 9,6 հազ. ընտանիք և նահանգի էթնիկական կազմը զգալիորեն այդ գաղթից հետո փոխվեց, սակայն այդ վարչամիավորը կրկին մնաց հայահոծ երկրամասերից մեկը:

Արդեն 1830—1831 թթ. սկսվեց մի նոր գործընթաց, որն ամբողջ XIX դարում և XX դարի առաջին տասնամյակներին դարձավ Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական զարգացման գլխավոր ուղղությունը: Պատմական Հայաստանի տարբեր, հիմնականում՝ արևմտյան և հյուսիսային գավառներից հալ բնակչությունն սկսեց հոսել դեպի Ռուսաստանի նորահաստատ սահմաններին մոտ ընկած գավառները, մասնավորապես Բասեն, Ալաշկերտ, Նահին, Բայազետ: Բանն այն է, որ Ռուսաստանին հարակից արևմտահայ գավառներում աղագյին ու սոցիալական ճնշումները համեմատաբար թույլ էին և պետական սահմանն անցնելու հնարավորությունն ավելի մեծ էր<sup>14</sup>, որի համար բնակչության հոսունությունն արևմուտքից արևելք ձևոք էր բերում քաղաքական երանգ: Անգամ 1829—1830 թթ. գաղթի ամենաթեթօրերին Արևմտյան Հայաստանի մի քանի գավառներից առաջին գաղթականները տեղափոխվեցին դեպի արևելք ու հարավ-արևելք և բնակություն հաստատեցին գաղթածների գյուղերում<sup>15</sup>:

1829—1830 թթ. մեծ գաղթից հետո ամայացած կամ նոսրացած գյուղերը թվում էր այլևս չեն վերականգնվի, սակայն արդեն 1830-ական թվականներից նկատվեց այդ բնակավայրերի վերաշինման միտում: Այդ երևույթը թերևս նկատելի էր նաև ժամանակակիցների շրջանում: Այդ օրերին Արևմտյան Հայաստանում բողոքական քարոզչությամբ ղեկավարող է. Սմիթը, որ 1830 թ. մտավախություն էր հայտնում, որ երկբամասի դատարկվելու պատճառով իր քարոզչությունը կարող է մնալ անարդյունք, արդեն 1831 թ. ապրիլին, երբ Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից ժամանած հալ վերաբնա-

13 Ա. Մելիքյան. էրզրում. էրզրումի նահանգի հալ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին. Երևան, 1994, էջ 115—117:

14 Մատենադարան. Ջանազան հեղինակների արխիվ, թղթ. 54, վավ. 132, թ. 23ր:

15 Ս. էփրիկյան. Պատկերազարգ բնաշխարհիկ բառարան. հ. Ա. Վենետիկ. 1902, էջ 492:

կիշները և Անդրկովկաս գաղթածներից նորից հայրենիք վերադարձածները կենդանացնում էին կիսադատարկ հայկական գյուղերը, ոգևորված դրում էր. «Մենք շենք կասկածում, որ հայ բնակչությունը նորից կհավաքվի այստեղ և (այն—Ա. Մ.) կարող է դառնալ քարոզչական գործունեության համար կարևոր կենտրոն»<sup>16</sup>.

Արևմտյան Հայաստանում հայակուլ էթնիկական դործընթացները խորացան XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին, 1853—1856 թթ. պատերազմից հետո ուսաների կողմից գրավված էրզրումի նահանգի արևելյան դավառները և Կարսը նորից թուրքերին վերադարձնելու չուրը արևմտահայության նոր արտագաղթի պատճառ դարձավ: Բաղմահազար էրզրումցիներ, կարսեցիներ, ալաշկերտցիներ, բայազետցիներ արտագաղթեցին Անդրկովկասից Ռուսաստանին անցած շրջաններ<sup>17</sup>: Նրանց մի մասը հաստատվեց Լուրին՝ գյուղերում, Սև ծովի առափնյա շրջաններում, Հյուսիսային Կովկասում և այլուր: Միայն 4 հազ. ընտանիք տեղափոխվեց ալժմյան Ստավրոպոլի երկրամասի տարածքում<sup>18</sup>: Նույն ժամանակ Կովկասից մեծ թվով լեռնականներ, հատկապես նրանց առաջնորդ Շամիլի հպատակեցումից հետո, անցնում են Արևմտյան Հայաստան՝ զբաղեցնելով լքված հայկական բնակավայրերը: Թուրքական կառավարության գործուն ջանքերով լեռնականների (նրանք հայտնի էին լեզգիներ կամ շերքեզներ հավաքական անունով) մեծ մասը ռազմաքաղաքական նկատառումներով բնակեցվեց Ռուսաստանին սահմանակից էրզրումի նահանգի արևելյան դավառներում, մասնավորապես Բասենում<sup>19</sup>: Վկայակոչենք էրզրումի նահանգի սերքոհիշյալ գավառների հայ ազգաբնակչության և հայկական բնակավայրերի թվաքանակին

	Գավառի անվանումը	Բնակավայրերի թիվը		Հայ բնակչության թիվը (շնչերով)	
		1809 թ.	1909 թ.	1809 թ.	1909 թ.
1	էրզրում	129	52	67960	34376
2	Դերջան	57	31	32920	9128
3	Բարբրդ	79	30	30960	14314
4	Երզնկա (Կամախի, Գուրուչայի, Կերնանխի հետ)	124	52	44760	25095
5	Քըզի (Կեղի)	75	50	25440	13705
6	Սպեր	81	18	28300	3122
7	Թորթում	53	13	16960	2829
8	Բասեն (Վերին և Ստորին Բասեններ)	87	57	35130	12404
9	Խնուս	59	33	20960	15295
10	Ալաշկերտ (Կարաքիսայի հետ)	88	22	28160	10248
11	Խամուր և Դութաղ	23	22	7360	1421
12	Դիադին	36	7	11520	1092
13	Բայազետ Ընդամենը	40	4	30800	3920
		931	391	381230	151949

16 E. Smith. Researches of the rev. E. Smith and rev. H.G.O. Dwight in Armenia, vol. 2, Boston, 1833, p. 306.  
 17 Акты Кавказской археографической комиссии, т. XII, Тифлис, 1904, с. 313.  
 18 Նույն տեղում, էջ 1389,  
 19 Մատենադարան, Ձանազան հեղինակների արխիվ, թղթ. 54, վավ. 131,2,3,4:

վերաբերող աղյուսակը, որը պատկերացում է տալիս նահանգի դեմոգրաֆիկ շարժի մասին մեկ դարի ընթացքում՝ մոտավորապես 1809—1909 թթ., (տե՛ս նախորդ էջում)<sup>20</sup>:

Վերը բերված աղյուսակից դժվար չէ նկատել այն աղետալի յսպուրդագրական իրավիճակը, որ հայության համար ստեղծվեց էրզրումի նահանգում մեկ դարի ընթացքում: Այդ ժամանակահատվածում հայկական բնակավայրերի թիվը կրճատվել էր 58 %-ով, իսկ հայ բնակչությունը՝ 60 %-ով: Հասկանալի է, որ առավելապես տուժել էին նահանգի Ռուսաստանին սահմանակից գավառները՝ Բալազկերը, Ալաշկերտը, Բասենը, Սպիքը, էրզրումը, որտեղ համիդեական կոտորածներն ավելի զանգվածային բնույթ էին կրել և տեղի էին ունեցել խոշոր արտագաղթեր դեպի Արևելյան Հայաստան և Անդրկովկասի այլ շրջաններ<sup>21</sup>: Սպեբի, Թորթումի, Բաբերդի գավառների հայաթափման գլխավոր պատճառներից էր նաև կիսամահմեդականացած հայության՝ կեսկեսների հետագա թուրքացումը, որը պետք է ենթադրել, անդի է ունեցել գլխավորապես XIX դարի վերջին և XX դարի սկզբին՝ համիդեական կոտորածները շրջանում:

Այսպիսով, մինչև 1915 թ. հայոց Մեծ եղևունը, մի քանի հարյուր տարի անընդհատ, մերթ դանդաղ, մերթ բուռն տեմպերով էթնիկական ցեղասպանության գործընթացն Արևմտյան Հայաստանում արդեն տեղի էր ունեցել, հանգամանք, որը օբյեկտիվորեն պայմանավորում էր թուրքական սիրապետության դեմ հայ ազգային-ազատագրական պայքարի անհաջողությունները: Կարծում ենք, որ XVI—XIX դդ. ընթացքում Արևմտահայաստանում տեղի ունեցած հայաթափման երևույթները, որոնք անուշադրության են մատնվել հայոց պենոցիդի հարյուրավ գրադվող շատ մասնագետների կողմից, նվազ կարևոր չեն իբրև ցեղասպանության գրսեորումներ Օսմանյան կայսրությունում, առավել ևս, որ Միավորված Ազգերի Կաղամկերպության 1948 թ. ընդունած բանաձևում ցեղասպանություն է համարվում ոչ միայն մեկ ազգի, կրոնական համայնքի կամ ռասայի դեմ ուղղված ֆիզիկական բնաջնջման գործողությունը, այլև հայրենիքից վտարելու, բռնությամբ ազգափոխելու, կրոնափոխելու, իր հայրենի հողում կյանքի անտանելի պայմաններ պարտադրելու ճանապարհով հեռացնելու երևույթները, այսինքն ան, ինչ տեղի էր ունեցել Թուրքիայում դարեր շարունակ:

## ТЕНДЕНЦИИ ДЕМОГРАФИЧЕСКИХ ПРОЦЕССОВ В ЭРЗРУМСКОМ ВИЛАЙЕТЕ (XVI в.—начало XX в.)

АШОТ МЕЛКОНЯН

### Резюме

Захваченная османскими турками Западная Армения в начале XVI века была разделена на обширные административные единицы—эялеты (вилайеты), одним из крупнейших из коих был Эрзрумский. Всестороннее изучение негочиков, в том числе турецких, показывает, что в период захвата страны как Эрзрумский эялет, так и вся Западная Армения были заселены в основном армянами. С целью утверждения турецкого господства над краем султанское правительство прибегло к методам насильственного мусульманизирования христианского населения, вытеснения армян

20 Ա. Մելքոնյան, էրզրում..., էջ 113—117, 158 և Ա.-Մ. Վանի, Բիթլիսի և էրզրումի վիլայեթները. Երևան, 1912, էջ 226:

21 Մատենադարան, Մկրտիչ Խրիմյանի արխիվ. Թղթ. 101, վ. 1, 137, 248, Թղթ. 102, վավ. 639, Թղթ. 103, վավ. 429:

из своих исконных земель и переселения из разных мест курдских и тюркских племен в Армению. Однако и в таких условиях Эрзрумский эялет, более всех подвергнувшись демографическим изменениям, оставался одним из самых густонаселенных армянами административных районов Западной Армении. Тогда в нем насчитывалось до 978 деревень и 14 городов, в которых проживало более 400 тысяч армян. К сожалению, в течение XIX века в результате вышеуказанных антиармянских этнодемографических процессов, в частности, массовых погромов 1890-х годов, до начала первой мировой войны численность армян в Эрзрумском эялете сократилась на 60%, а число населенных пунктов на 58%. Таким образом, с XVI века демографическая политика, проводимая Османской Турцией в отношении армянского населения, носила целенаправленный характер и с конца 90-х годов XIX века переросла в государственную политику геноцида.

TENDENCIES OF DEMOGRAPHIC PROCESSES IN THE  
ERZERUM VILAYET (XVIc—the beginning of XXc.)

ASHOT MFLKONYAN

Summary

Western Armenia annexed by the Ottoman Turks at the beginning of the 19th century was divided into large administrative units—eyalets (vilayets). One of the largest vilayets was Erzerum. All-embracing study of the sources, including Turkish, shows that at the period of the annexation of the country, as the Erzerum eyalet, as well as the whole of Western Armenia were populated by the Armenians. With the purpose of establishment of the Turkish dominion in the region the sultan government used the methods of forcible muslimization of the Christian population, deportation of the Armenians from their native lands and resettlement of the Kurdish and Turkish tribes in Armenia from different places. But even in such conditions the Erzerum eyalet, which suffered the most of all these demographic changes, remained as one of the most densely Armenian populated administrative regions of Western Armenia. At that period there were 978 villages and 14 towns in the Erzerum region numbering more than 400 thousand Armenians. Unfortunately, during the 19th c. the number of Armenians and of Armenian settlements in the Erzerum eyalet reduced correspondingly by 58% and 60%. Thus, Ottoman Turkey's demographic policy, realized since the 16th c. towards the Armenian population, had an aimed character and from the end of the 19th c. turned into the state policy of genocide.